

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա

Տարեկ. 10 ֆր.


Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏԱԿԱՆ

Գրութիւնք եւ
չին տրուիր

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՅԱՒԼԻՍ 8 ՇԱԲԱԹ 1900

ԹԻԻ 169

ԿՐԹԱԿԱՆ ԶԱՒԵՇՏԸ

Կան դերասաններ, որոնք յաւիտենապէս ծափուելու արժանի, յաճախ ի բեմ կը կոչուին, ըզգիսած ժողովուրդին խանդավառ գոհունակութեան տարափովը օծուելու համար:

Մեր վարժապետներն ալ մեր է՛ն վարպետ դերակատարներն ըլլալով, թող ներեն ընթերցողներս, որ ընդհատելով յօգուածներու շարքը, հարկեցուցիչ անդրադարձումով մը զանաք վերստին ի բեմ կաշեմ դեռ նոր գոյւած վարագոյրին ետեւն:

Աչքապուկի այն խօլ իրարանցումը, որ լարուած ժամացոյցի ճշգրտութեամբ տմենւոք միևնոյն ատեն տեղի ունէցաւ այս անցած եօթնեկին մէջ տնոգոտ ոգևորութեամբ մը, Պուլկարահայր մէկ ծայրէն միւսը նորէն դրաւ ինքնախաբէութեան պատրանքին մէջ, ճիշդ ուրիշ տարիներու նման անուշ յոյսերով աւելցուն իր ազգային կըրթական գործին համար:

Բեմերը զարդարուեցան գունազեղ ծաղիկներով. քուլիսները լեցուեցան ինքնագով տնօրէններու հացկատակ ստորակարգեալներով. դէմ դէմի շարուեցան երկսեռ ուսանողները և այս ամեն խաբէական վեհափառութեան սատարող ծընողքները ցցուեցան Քնոն արձաններու պէս, բերաններն բացած՝ ողորմելի կէցցէներ մրմնջելու և ձեռքերնին պարզած՝ պօռոտ տնօրէնին մէջ մի անիմաստ, անլի ու լըրճուկ բացազանչութիւնները ծափելու համար:

Ահա բոլոր հոգեբանական պատմութիւնը՝ ինչպէս այս տարուան, նոյնպէս և քսան և հինգ տարիներէ ի վեր պուլկարահայր լսած ու տեսած «Վիճակացոյցերու բաշխում» անուն դերազանցապէս ծիծաղելի զաւեշտին, զոր իբրեւ վերջին վա-

րագոյր կը ձօնեն պատուելիները ամբողջ մէկ տարուան տուամէն յետոյ:

Ատոնք՝ այդ օրը սրբած կըլլան իրենց արիւնտ դանակները և ատոր համար կարժանանան ծնողքներու անգիտակից ծափին, որ յեսանը կը դառնայ ապիրատներու դանակներուն, երկու ամիս յետոյ վերսկսելու համար Շուվինեօուի դահճային պաշտօնն ու դերը կատարեալ անխղճութեամբ:

Ատոնք՝ շատ կանուխ հրաժեշտ տուած պարկեշտութիւն ըսուած բանին, փոխանակ անկեղծ տեղեկագրով մը — ինչպէս ըրաւ ԲԵՏԱՌԱՐԱՐ Վառնայի Սկզբ. երկսեռ վարժարաններու Տնօրէնը և առով իրաւամբ արժանացաւ ամեն հաւկացող մարդու յարգանքին — իրենց կրթական հաստատութեանց թերութիւնները մատնանիչ ընելու եւ ատոնց դարմանը փնտռելու, փոխանակ բացատրելու թէ ինչո՞ւ տարուան ընթացքին մէջ հակառակ ծրագրին ու եղած յայտարարութեանցը, չ'աւանդուեցան աս ու ան ճիւղերը. ինչո՞ւ եւ ինչպէ՞ս ճիւղի մը պատմութիւնը այդ ճիւղին գիտութեանէն առաջ ուսուցանելու ծիծաղելի ստախօսութեանը ապաստանուեցաւ. ինչո՞ւ վտարուեցաւ խել մը կարեւոր գիտութիւններու ուսուցումը, ինչ որ տարւոյն սկիզբը պատուոյ խօսքերով երաշխաւորուած էր. ինչպէ՞ս, ի՞նչ դաստառներով եւ ի՞նչ միջոցներով աւանդուեցան յայտարարուած այն խել մը գիտութիւնները, որոնք թերեւս չ'ինարէնի չափ անձանթ բաներ էին իրենց ամբողջ ուսուցչական մարմնոյն համար. փոխանակ այս ամենը պարզելու, չեղածը եղած ցուցնել կուզեն եւ իրենց ստեղծած սուտին իրենք հաւատալով, ա՛լ կը սկսին մարդկութենէ դուրս ելլել . . . :

Լսած ըլլալով քննադատութեան խուլ արձագանքներ, կը մոռնան տեղն ու պարագան ու

զէյ մէ քէկի , քէկի(*) կը քֆրեն կաշտ կուշտ ու իրենց գոհունակութեան իբր յայտարար նշան տոնքացող աքօրնեքու պէս զիկզակութեամբ կիջնէն բեմէն վար , այսպէս մէկ խօսքով ջնջած ըլլալով կարմիր քննադատութեան մը շեշտակի հարուածները ։ ։ ։

Եւ վտրագոյրը կիջնէ կրթական զաւեշտին Այլ մոռացութիւնը կուգայ գերեզմանային լուսութեան դատապարտել ամէն ինչ և մեր պատուելիները կը վերսկսին նորէն լռիկ մնջիկ յաջորդ տարուան գերերու բաժանումովը զբաղիլ միեւնոյն ողբերգութեանը համոր :

Այսպէս եղեր է մինչև հիմա և չը կայ ո եւ է միսթարական երեւոյթ , սր բարեշրջութի նշաններ ցոյց տայ հիմակա հիմա : Այս , քսան քանի տարիներէ ի վեր այս ֆանթէլի միմոսութիւններով Պուկարահայոց քսակներէն ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՒՆ ֆրանքներ առնուեր է ու գոնէ երկու հաա զուտ Ազգ : դատարարակութեամբ զորգացած քընթտցաւարտներ չէ՛ տրուեր ազդին եւ չը կայ ո եւ է բտրի նշան մը հաւատալու համար թէ երկու ուրիշ միլիոններ ալ չպիտի խլուին իրմէ միեւնոյն ամլութեան յաւերժացումին համար :

Այլ սիրտ ունեցողը թող ծափէ այս զաւեշտը որչափ որ կ'ուզէ :

ԾԱՆՕԹ

(*) Որ Արաբերէն ըսել է «ինտոր կուզէ ըլլայ» :

ԱԶԳԱՅԻՆ

Պատրիարքարանը այս չաբթուակներ է զըրկել զաւառական Որբանցներու յուլիս և օգոստոս ամսականները :

— Տնտեսական խորհուրդը նկատելով որ Ազթամարայ վանուց մէջ դեռ շատ արժէքաւոր հընութիւններ կը գտնուին , զորս անհրաժեշտ է ապահովութեան տակ առնել , որոշեց յանձնարարել Վանայ այցելու Հովիւներէն եպիսկոպոսի Ազգմակերպել վանքին ներքին վարչութիւնը

և թանգարանին մէջ դտնուած գոյքերու ընդհանուր ցուցակը պատրաստելով , նոյն վարչութեան վաւերացնել տալէ յետոյ , Պատրիարքարան զրկել

— Ազգ . Հիւտնդանոյի Հոգաբարձութիւնը երկու տեսակ տոմսեր պատրաստել տուած է :

Ասանցմէ մէկը շքեղ և ոսկեզօծ , յատկացուած է ամուսնութեանց առթիւ (փոխան ծաղկեփունջի) Հիւանդանոցին ըլլալիք նուիրատուութեանց իսկ միւսը , սե շրջանակով , ննջեցեալի մը ծանօթներուն և բտրեկամներուն կողմէ (փոխան ծաղկեպսակի) եղած նուիրատուութեանց : Ասոնց վրայ պիտի նշանակուին նուիրողին անունը եւ որո՞ւ կամ ի՞նչ նպատակի համար նուիրուած ըլլալը :

ՏԵՂԱԿԱՆ

— Տեղւոյ վարժարանաց Հոգաբարձութիւնը երկսեռ ուսուցչական մարմինը ամբողջովին հըրժարեցուցած է :

— Վառնայի Աղլկանց Կրթարանի հրապարակային հարցաքննութիւնք կը սկսին վաղը 9 յուլիս եւ պիտի տեւեն մինչեւ յուլիս 15 :

— Ֆիլիպէէն մեզ կը գրեն . — «Տեղւոյ վարժարանաց տնօրէն Վահան Շահրիման՝ որ Տ. Յակոբ Աղամեանի Գառնիկ որդին դանակոծած էր , տեղական դատարանի յունիս 21 և թիւ 59 վճռագրով 106ուկէս ֆր . տուգանքի կամ մէկ ամիս բանտարկութեան դատապարտուեցաւ » :

(Այսօր թերթերնիս տպագրուած պահուն՝ Ֆիլիպէի դատարանին տուած վճռոյն մէկ վաւերացեալ օրինակը ձեռքերնիս հասաւ , որ կը հաւատտէ վերոյիշեալ լուրը Ծ . Խ .)

— Գաղափար մը տալու համար Պուկարիսներկայ տարւոյ ցորենի առատութեանը մասին սաչափ կըսեն թէ՛ հասկերուն ցողունները ցուցամատի հաստութեամբ են և իւրաքանչիւր հասկ կը պարունակէ 100—115 հատիկներ ինչ որ մինչև ցարգ տեսնուած չէ եղեր :

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Ուսմը Մաս. Յունիս 20

Ամերիկայի Լորենս քաղաքի Հոգեւոր հովիւ Արթ. Արսէն Ա. Վեհունի՝ անցեալ կիրակի Նիւ-Եօրքի եկեղեցիին մէջ Ո. Պատարագ մատոյց եւ քարոզ խօսեցաւ. այս կիրակի ալ Ուսմըի Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ պատարագեց եւ քարոզ խօսեցաւ. Նիւթ ընտրելով «Ի՞նչ է Հայ եկեղեցին եւ ովքե՞ր հիմնեցին» եկեղեցին լեցուած էր հաւատացեալներու երկսեռ բազմութեամբ, որոնք զօժարեալով մեկնեցան: Քաջայայտ ենք թէ Հայր սուրբը օգտակար պիտի ըլլայ Լորենսի հայ դպրոցականներուն:

Անցեալ շաբթու յունիս 16 հինգշաբթի կէս օրին Ուսմըի մէջ սաստիկ անձրեւ մը տեղաց որ տեւեց 15 վայրկեան: Ամերիկեան թերթերը յայտարարեցին թէ երբէք չէր տեսնուած տասնկ տեղատարաւ մը. ազբիւրի պէս կը վազէր երկիրքէն. թերեւս միայն ջրհեղեղի ժամանակ եկած ըլլայ: Ամբողջ քաղաքը պաշարուած էր կայծակներով որ մի քանի շէնքեր աւերեց ու մարդիկ մնացին փլատակներու տակ, կործանեց նաեւ շատ մը կաղնիներ: Նիւ Ուսմըի մէջ ջուրը այնչափ բարձրացաւ որ գրեթէ լիճ մը ձևացուց: Պատճառած փետր խիստ շատ է:

ԱՅՐԻՈՒ

Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ

Ա. Տ. Յ. ԳԱՆԹԱՐԵԱՆ Ի Ֆրիլպէ

Հակառակ ձեր տուած ճշմարտութիւնը խեղդողութեամբ հերքումին, ֆրիլպէի Գատարանին վճարարը կը հաստատէ թէ երկսեռ վարձարաններու տնօրէն Աւահան Շահրիման՝ Տ. Յակոբ Արամիանի Գառնիկ որդին պանակոծած և այս պատճառաւ դատաւարուած է 100 ֆր. տուգանքի և դատական ծախսոց: Ուստի կոչում կընենք ձեզ որ վերոյիշեալ հերքումիդ ալ հերքելու ազնւութիւնը ունենաք հրապարակաւ, գիտնալով որ հակառակ պարագային՝ ուղարկուելով պահուստէն խաղաղ ուղողին արգահատելի փեշակը բաժին պիտի մնայ ձեզ, որ պաշտօնական կնիքի մը ներքեւ երեցաք այնքան անկողմնակալութեամբ (° ° °):

ԽՄԻ.

Որբախնամ ընկ. հաւաքիչ Պ. Կարապետ Պալճեան հրաժարած ըլլալով, Պ. Ռուբէն Բարապաճեան հարիւրին 8 վարձքով յանձն առած է հաւաքչութեան պաշտօնը. եթէ աւելի պակաս ընելու փափաքողներ կան, թող գիտնեն Կեդր. Գործ. Ժողովին:

Վառնա

ԿՆԻՔ

Ս Ի Ր Ա Յ Ի Ն Կ Ա Յ Ծ Ե Ր

ԿՈՒԼԱՅ . . . ԲԱՅՑ ՈՉ ԻՆՉ ՀԱՄԱՐ

Արշալոյսին թեթեւ գեփիւնը ըղլայի,
Այց եղէի պարտեպիս մէջ խանդավառ.
Վարսին վրայ Պոլկարուհոյն հողանի
Թառ կապմէի, փախսայի ունկն ի վար,
Դրա՛, աղջիկ, իմ տունէն
Կախող մարդն եմ ամէն օր,
Զֆեզ հոգոյս իմ խորէն
Պաշտողն եմ եւ սգաւոր:

Արշալոյսին շողն ու շաղը քաղքուցի/
Կամ աստղերէն կարկթած ցոյն ըղլայի.
Դիտէն ի վար, լանջին վրայ քաղանցիկ
Պրշկուէի, տարածուէի, օծէի.

Արցունքի թէ ցոյ, պաղ թէ տափ
Կակղեղմ կործմէն անգութիւն,
Որ գրահն է ամբարիսկ
Նոսն չրքնաղ տաճարին:

Սիրսն է տաճար, որ ո՛վ գիտէ, ո՛րն համար
Փոխերմ պէս հեւն ի հեւը տնոյն.
Նա կասկարմիր, բոց աջերոյ հորն ի վար
Ամեն առտու աղի արցունք կը քաղի:
Եւ կարտաւառել իր համար,
Նա կարտաւառէ հորն ի վար.
Պիշ կը նայիս իրեն եւ,
Ինք կը նայի դէն ու դէս:

Կուրա՛յ, այո՛, անդադար
Դասակը բաց դողահար,
Դոյնը ձեռքին խեղդ խեղաւ
Կուրա՛յ . . . բայց ոչ ինձ համար:
Մըտե՛ք, խնդրեմ, լեւ հասար,
Եւ Թովմասն եմ իսկաբար
Թերեհաստան առաքեալ,
Կուրա՛յ . . . բայց ոչ ինձ համար:

ԱՊՈՒ—ՆԱՏԱՐԱ

Ա.Զ.Դ.

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ յանձնակատարի կանոնաւոր երթևեկ մը հաստատած ենք ընդ մէջ Վառնա, Շուշա, Բլեքնա, Սօֆիա և Ռուս-ճուրի ու պիտի գոհացնենք մեր Պատ. յաճախորդները ամեն կերպով: Կեդրոնատեղին է Տ. Ա. Զարպհանէլեան գրատունը Վառնա:

ՆՇԱՆ ՍԱՐԱՓԵԱՆ

Պ Տ Ո Յ Տ

ԲԱՐԻՉԻ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԵՍԻՆ ՄԷՉ

7

Պէջմիխայի տաղարարը. — Շինուածքին ձևը թէեւ պարզ, բայց քանդակները շատ գերազանց են և շէնքին վրայ տեղ մը չի տեսնուիր ուր քարը տանթէլի մը պէս գործուած չըլլայ: Մէջը գտնուած շրմինէն 1529էն մնացած է:

Մինչդեռ օտար պալատներուն մեծագոյն մասին ձևը իրենց երկրին նշանաւոր շէնքերէն առնուած է, Պէլճիգա, տաւանց ու է փոփոխութիւն մը ընելու կառուցանել տուած է զլուխ գործոց յիշատակարան մը, Օտընարտի քաղաքատան ձեւին վրայ Բայց ճիշդը ըսելով Պէլճիական տաղաւարը միմիայն ընդօր նախութիւնն է այս քաղաքատան որ շատ աւելի հսկայական է: Տաղաւարին ամեն մէկ մասը իսկականին վրայ կաղապարուած է, և կաղապարման գործողութիւնը Պրիւսէլի ամէնէն նշանաւոր քանդակագործէրէն մէկը՝ Պ. Կոյէն, կատարած է, գրեթէ մէկ տարուան մէջ:

Պատերը ծածկուած են շատ հին և ամենադեղնակի գորգերով ու վահաններով:

Որահին մէջ կը գտնուին Ս. Անտոնի և Ս. Նիկողոսի նշխարները և Լէոբոլտ Բ. Թագաւորին պատկերը, զոր Լէքմբաէլս նկարիչը շինած է: Քովի սալօնին մէջ կայ Ալպէր իշխանին կենդանագիրը, զոր Մասթ շինած է և Թագաւորին ու Թագուհւոյն կիսարձանները, դործ՝ Վէնսոթի: Յարակից մասը յատկացուած է Պէլճիական վաճառականութեան և արուեստներուն:

Տաղաւարին վարը, ընկերութիւն մը ԺՁ. դարու գեղանկար զարդերով դարեջրատուն մը հաստատած է:

Այճեհիոյ տաղարարը սքաւաչելի գաղափար մը կուտայ, որուն մէջ ցուցադրուած են այդ տաք երկրին բոլոր արտադրութիւնները: Հոն կը տեսնուին երկրագործութեան զանազան եւ անթիւ արտադրութեանց քով նաեւ հանքային արտադրութիւնները ինչպէս երկաթ, զինկ, արծիճ, արծաթ, անթիւնաւն զանազան յարգի քարեր, և այլն, և այլն:

Փրանսայի բոլոր գաղթականութեանց յատկացեալ մասերը հաւաքուած են Թրօքատէրոյի շէնքին բոլորտիքը և այդ շէնքին անունը կրող պարտէզին մէջ: Իրարու քով կը տեսնուին Ալճեհիոյ, Թօնքինի, Քօշինշինի, Մատակասկարի, Տահմէի և ասիական, ամերիկեան ու ասիական բոլոր գաղթականութեանց շէնքերը: Ատնց հետ խառնուած են նաեւ Թրանսփալի յատկացուած շէնքը և Քանատայի մասը:

Սէյրանի մասնաճիւղը ցուցադրած է տուփ ոսկեգոյն թէյ, Բիւրն 40 Անգլ. ոսկիի, ինչպէս նաեւ տուփ մը արծաթագոյն թէյ, Բիւրն 24 անգլ. ոսկի, բայց աւելորդ է ըսել թէ այս թէյերը սովորաբար ծախուածներէն չեն:

(Շար.)

8.

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ԼՈՒՍԱՂԻՐԻ

Կ'ընդունիք անշուշտ թէ սովորական բան մը պիտի ըլլար ջուր դնել լուսաւոր աղբիւրներու մէջ, վասն զի գործը արժանիք մը չունենար: «Ամենէն մեծ դժուարութիւնը, ըսած է Մ. Տառի, շինելն է այնպիսի լուսաղբիւրներ ուր ջուրի կաթիլ մը իսկ չգտնուի»: Հիմա կատարուած իրողութիւն մըն է լոյսի աղբիւրը, որուն վրայ կրնաք սքանչանալ Բարդի ներկայ Արուեստահանգէսին Սպանիական տաղաւարին Մաւրիտանական բաժնին մէջ: Ահա պատմութիւնը որ բաւական զուարճալի է: Սպանիական տաղաւարին քոմիսէրը խնդրած էր ծանօթ ճարտարագէտ Կիւսթաւ Թըրուլէէ որ սրահին կեդրոնը իսկապէս և նորօրինակ բան մը հաստատէ, ամենուն ուշադրութեան արժանի: Կարգ մը խորհրդակցութիւններէ ետքը, համաձայնութեամբ կորոշուի շինել լուսաւոր մեծ աղբիւր մը որուն ցայտերը 6—7 մէդր բարձրութիւն ունենան: Բայց նկատելով որ այս բանին համար ջուրի ահագին մթերքի մը եւ հետեւաբար մեծ ծախքի մը պէտք կայ, Քօմիսէրը սարսափով ետ կը քաշուի և կ'աղաչէ Մ. Թրուլէի որ ջուրէն նուազ սուղ բան մը խորհի գտնել:

ճարտարագէտը երկունքի մէջ մտնելով վերջապէս հետեւեալ ճարտար միջոցը կը խորհի ու կը գործադրէ: Դէպի կեդրոն հակած աւաղանի մը վրայ կը դնէ երկտրական հզօր հովահրիչ գործիք մը և անոր վրան խողովակ մը որ աղբիւրին կտուցը կը կաղմէ: Խողովակին ծայրը դուռուց աղբիւրաւոր կանգեղ մը իր ճառագայթները ցլաջնելով կը լուսաւորէ ոչ թէ հեղուկ մը, այլ սրոշեալ քանակութիւն մը բրինձ, հատիկներու, որոնց հետ խառնուած են սուտ ոսկեթիթեղ և փայլար (նիւս): Ատնք հովահրիչ գործիքէն փչուելով խողովակէն դուրս կը ցայտեն եւ կիյնան աւաղանին մէջ: Օգի հոտանքը հոն հանգիստ չի թողուր զիրենք և կը ստիպէ ցատկաբար Գունաւոր ապակիներով զարդարուն գունտ մը խողովակին տակէն դառնալով զանազան գոյներ կուտայ լոյսով թաթախուն այս հիւլէներուն: Տեսարանը շատ հիանալի կըլլայ:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԲՈԺՈՒԿԻ



Նկատելով որ Պուլկարահայ մամուլը վարժարանայ ներկայ տարեկան քննութեանց առթիւ կատարեալ լուծիւն մը պահեց մինչև այսօր, ինչ որ ապացուց է թէ Պ. Խմբագիրները, կամ իրենց ներկայացուցիչները ինչպէս նաև թըղթակիցներն ու նամակագիրները զո՛հ չէին մնացած վարժարաններու վիճակէն, զոր ասկէ առաջ Հայեցի նախագուշակած էր, ուստի Պ. Բոժոժիկ՝ ամեն տեղէ իրեն նկատ խնդրանքներուն գոհացում տալու համար անցեալ կիրակի տեղւոյս ելլ Տէյրմ, ինչին հրապարակը երկուսն բաղմութեան մը ներկայութեանը, վարժարանայ մասին հետեւեալ բանախօսութիւնը ըրաւ:

Տես՛րք և Տիկնայք,

Տարւոյս մէջ այս երկրորդ անգամն է որ զձեզ կը հրաւիրեմ ելլ-Տէյրմէն թէքէն, լսելու համար տարեկան տեղեկագիրս՝ ուրիշ պիտի կրնաք դիւրաւ հասկընալ մեր վարժարաններու տարեշրջանին մէջ ըրած յառաջդիմութեան չափն ու սահմանը:

Տես՛րք և տիկնայք, ինչպէս գիտէք, մեր վարժարանները անցեալ տարի սովորականին պէս բացուեցան Սեպ. 1ին և այս տարի գոցուեցան Յունիս 30ին: Այս կրթական յարկերուն տակ տարի մը ժամանակ անցնող ուսանողաց մէկ մեծ մասին ըրած յոռաջդիմութիւնը պարզելէ առաջ՝ նախ պէտք է թուեմ ձեզ ուսուցչական այն տիպար խմբակին գործունէութիւնը՝ որ ուսանող մանկտիւն հետ տարի մը նստաւ ելաւ, կերաւ խմեց ու ժամանակը անցուց:

Ունեցանք տնօրէններ, որոնց մասնագիտութիւնն էր սկիւն ու ճերմակին հետ հաւասարապէս հաշտ ապրիլը: Ունեցանք թեկնիման տնօրէններ, որոնք աչք ու գլուխ պատռելով դաստիարակեցին մեր զաւակները ու մինչև դաստիարակներու առջև բաշխուեցան: Ունեցանք տնօրէններ, որոնք առաջին չի տալու առաջինութիւնը գործնական փորձերով սովորեցուցին աշակերտաց: Ունեցանք տնօրէններ, որոնք կենցաղագիտութեան նուրբ դասեր տուին երկուսն ուսանողին, այն կենցաղագիտութեան որ քիւրտը այսօր ունի հանգէպ հայ կնոջ: Ունեցանք տնօրէններ, որոնք տակաւին դաստիարակուելու կարօտ մեր տղաքը դաստիարակելու ելան ու մեզի յիշեցնել տըւին սա թրքական առածը. «Եւէ՛ կիւնլէրէ գալտըզ է՛ զաղի հիւնքեր», է... սիրահար ումուշ Գա... մեծ հիւրտար: (Ծախահարութիւն եւ պուսիօ՝ նախապատասխան կոյկոյճի խմբակէն):

Գալով ուսուցիչներուն, տեսանք անանկներ՝ որ հայ-հայախօսութեան ու անբարոյականութեան մասնագետներ էին: Տեսանք ուսուցիչներ, որոնք տարի մը ամբողջ իսսեցան տղոց, առանց անոնց լեզուէն հասկնալու և իրենց

ցը հասկնելու: Տեսանք ուսուցիչներ որոնք իրենց կարգին ձկունութեան յաւագոյն դասեր տուին, գործնականապէս ցոյց տալով առաւ-փախաւութեան դերը: Տեսանք ուսուցիչներ և ուսուցչուհիներ, որոնք իրենց սիրաբանութեանց ժամադրաւոր ըրին այդ յարկը ու վերջ ի վերջոյ հասան իրենց սրտին մոռասին (Գոյիսկներու մէջ սպասող ուսուցիչներու կողմէ ծախահարութիւն): Նոյնպէս տեսանք տիպար պարտիզպանուհի մըն այ որ իր անցեալին մէջ ճարտէ լաւ ըլլալը չի մոռնալով, ուսանողները կազմեցին մէկ խաղցուց և անոնց ժառանգութիւնը տուաւ: Տեսանք ուսուցիչ և ուսուցչուհիներ, որոնք տարի մը պարապ տեղը մեր փառանքը առնելով, քննութեան ատեն՝ մեր աչքին թօղ փշելու համար նախապատրաստեալ հարցումներով խալպագանութիւն ի գործ դրին: (Բնութեանց ներկայ եղողներու կողմէ ծախահարութիւն եւ «պուսիօ՝ ճիշդ է, ճիշդ է»):

Գալով երկուսն ուսանողաց, անոնցմէ՝ դիմադարձութիւն ու ծնողքը նախատեսելու աստիճան առջորդութիւն ունեցողներու լէզէն մը ունինք: Ունինք նաև սիրահարական թղթակցութեանց մէջ չափահասներուն մէկ երկու բար հանող խել մը դգալնոցներ: Ունինք սոյլապան ու նաւավարներէ աւելի գերազանցապէս քֆրող մէկ բանի տուղիսա քիւֆրպաղներ: Ունինք առտուէն հօրը գրպանները պրպտող խումբ մը փոքրիկ բաւահաստներ: Ունինք խաշաւման սնամէջ ոսկորին միջոցաւ վարժարանէ վարժարան սիրատոմսերու գօռեստնտաններ կատարող թախը մը խլէղներ ու խլէղուհիներ:

(Կրկին ծախահարութիւն նախապատասխան կոյկոյճի խմբակէն)

Ազնիւ տիկիներ և պարոններ,

Սրտերնիք թուեմ հանել չի տալու համար այս տարի ալ մեր վարժարաններէն շրջանաւարտ մը չպիտի ունենանք, ինչպէս չենք ունեցած ի սկզբանէ ի վեր:

Անշուշտ ուրախ զուարթ պիտի ըլլաք երբ իմացնեմ ձեզ թէ տարեշրջանիս մէջ առաջ եկած այսչափ գեղեցիկ արգիւնք մեզի ապրանք եղած են 3,500 նարօլէնի, որ ամենուս գրպաններէն ելած են հատիկ հատիկ:

Քաջայայտ եմ թէ գալ տարի աւելի կը բարգաւաճին մեր վարժարանները, շնորհիւ վերոյիշեալ սարք մը տիպար տնօրէններու և ուսուցիչներու: Ուստի սիրելի ծնողքներ, դուք ձեր պարտքը նորէն կատարեցէք, ամբողջ տարի մը օրինակելի համբերութեամբ փառանքը ցնծացէք, տարեւելիս ճրապարակաւ պիտի լսէք վարժապետի դեր կատարող կեղծարարներու բերնէն ձեր զաւակներու մասին պատմախալի գովասանականներ, աչքերնուդ թօղ փշող ճառթճառութեանութիւններ, խալիկ կեղծաւորութիւններ, ու իրենց դիմակները վար առնողներուն ուղեալ խուլ հաշիւներ, որ պիտի ըլլան մեր ամենուս փառքն ու վարձատրութիւնը: Օրհնեալ էք և օրհնեալ լերուք. ամէն:

(Երկարատեւ ծախահարութիւն յորս կողմէն. «Կեցցէ՛ Բոժոժիկ, չի՛զ մի՛զ, պի՛զ...»):

ԳԱՅԹԱԿՂԱԿԱՆ

Երբ մեր եկեղեցականները ժողովուրդէն բարեպաշտութիւն ու ջերմեռանդութիւն կը պահանջեն, պէտք է դիտան թէ ժողովուրդն ալ փոխադարձաբար իրենցմէ կը պահանջէ պարտաճանաչութիւն եւ եկեղեցական կարգապահութիւն: Այսօր ցաւ ի սիրտ ստիպուած ենք խոստովանել թէ կարգ մը տէրպապաներ իրենց այս պարտականութեանցը մէջ շատ անգամ կը թերանան որ բնականաբար դէշ տպաւորութիւն մը կընէ ժողովուրդին վրայ:

Ամենքնիս ալ տեսած ենք որ քահանաներուն շարական երգած կամ մաղթանք ըսած տեներ՝ ժամկոչ մը, լուսարար մը կամ դպիր մը անոնց մօտեցած՝ հետերնին կը խօսին, չմտածելով որ այդ անվայել ընթացքով քայլակցութիւն կը պատճառեն ժողովուրդին, որոնցմէ ոմանք չը կրնալով հանդուրժել, մինչեւ իսկ եկեղեցիէն կը մեկնին:

Այս ըսածնուս մէկ նոր նմոյշը կրնայ համարուիլ հետեւեալը, որ տեղի ունեցած է ասկէ 15 օր առաջ հայաշատ քաղաքի մը Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ:

Քահանան կսկսի երգել. — Նորաստեղծեալ բանն յանէից . . .

Ժամկոչը գտնին հտեւէն — Տէր պապա .

— Ի սկզբանէ զերկինս . . . նէ՞ վար Ղուկաս աղբար .

— Շէյ կելին ակասը կէշմիշ .

— Երկնից . . . տուր պիրազ .

— Ամճաը սէնի կերմէք իսթէմիշ:

— Աննատըմ . . . եւ զերկնային զորս անմարմնաց . . .

— Փօը փօը փօը .

— Իմանտլեացն զուարթնոց . . . պիր աղտան

օլմազ մը .

— Փօը փօը փօը .

— Աննատըգ պապամ . . . եւ զգալի տարերց քառից . . . պիր աղ պէքլէսին . . . հակառակաց . . .

— Փօը փօը փօը .

— Քերոքա հապէր էաինիզ . . . միաբանից, որով յաւէտ փառաբանի . . . բազարըգ էտէլիմ . . . երրորդութիւն անճառելի . . . Կիթ պէօլլէ ոէօլլէ:

Դասին մօտ կեցող հաւատացեալ մը որ ունկընդրած էր այս շարականտխառն խօսակցութիւնն

կը գայթակղի ու բարկութենէն կառնէ կը քալէ:

Տէր պապան որուն անունը այս անգամ կը խնայենք հրատարակելու, պէտք է դիտնայ որ երբ եկեղեցի մտնենք, կայինք այնպէս՝ ինչպէս պիտի կայնէինք Աստուծոյ առջեւ կամ պարտաւէրի մը առջեւ . . . դոնէ:

ՋՈՒԹԱԿ

ՃԵՌՄՊԻՔ

(Աժառն Բոժոժիկ եւ Ընկ.)

Նէժըլ

Մ. Անդուան Նարոտէնկի հասցէին 100 Ֆրանք շրկուեցաւ ի վաճառքի եւ իւր կօյկօյճի խմբակին բարւօք ծառայութեանցը:

(Աւտակաւին բոնէ թէ: յանուն Ս. Գործին հաւաքուած գրամները իրենց նպատակին չեն գործածուիր . . .):

Մարիձա գետ

Խումբ մը ԲՅՈՍՊԻՆԵՐ իրենց միաբնակները ձգելով օտարէն մեռելները լալու համար սեւեր հագնան, դուխնին սեւ թիւերով ծածկեցին ու փողոց փողոց պտըտեցան աչքերնուն սոխ քսելով (ալուէային ուրջունք) ընդ առաջնորդութեամբ կօյկօյճի պաշի միւսիւ Բալապըյըլի:

Քամշաթքա

Օրական մէյմէկ քաւէթ թիւթիւն կապուեցաւ սնտաւագէս միւսիւ Գինկֆօնկեանին ստորակարգեալներուն, որոնք ամբաստելի վեր քիւր աշկրնա աշխատելէն խէրերնին անխնայ՝ «աման ալլահ» ըսելով ալ ոկսած էին ձայնաւորութիւն ընել: Քէօշէ պուճախ ակմարց մէջ այժմէն սա կարծիքը գոյացած է թէ աս խեղճ ծխավաճառն ալ քիչ ատենէն իր գրամալլալը . . . կատուին շալակը պիտի տայ:

Վառնա

«Բոժոժիկեան Լսարան» մը հաստատուեցաւ ԵՆԼ-Տէյիւմէնիին . . . թէքէն, ուր Պ. Բոժոժիկ՝ բազմաթիւ փափագողներու խնդրանքին զոհացում տալու համար ամեն շաբթու կարեւոր եւ կենսական մէյմէկ խնդիրներու վրայ պիտի ատենաբանէ, որ Հայքի ժիջեցաւ ալ պիտի հրատարակուի:

Առաջին ատենախօսութեանը նիւթ որոշուած է «Դարեմտիկ Առաւիախաւութիւն»:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.